

## ԱՃԵՄՅԱՆ ՄԱՆԻԿ

### ԱՐԱՐԱՏԻՆ

Ձյու ն է գալիս,  
Ու դու  
Ճերմակում ես  
Նորից:

Նորից  
Ամրանում է  
Սառույցը  
Սրտիդ:

Լուռ կմնաս  
Ու վես  
Արքայիդ հետ  
Ասպետ,

Որ ավերակ  
Երկրին  
Չուզեց  
Թագավորել:

Ինքդ այդպես  
Անբառ  
Ձյունոտ օրվա  
Մեջ պաղ,

Դեռ կմնաս  
Անսանձ  
Քամիների  
Առաջ:

Որպես մեր  
Ոգեղեն  
Ճերմակ օրվա  
Երազ:

### ԱՐԵՉՆԱԾԻՆ

Ես, որ աշխարհի  
Ստեղծման օրից  
Ապրեցի այնպես՝  
Հաշտ, մարդկայնորեն.

Եվ բարի եղա,  
Նվիրեցի սեր,

Ես մահկանացուս,  
Գարնան ու ձմռան  
Շրջապտույտում  
Կյանք արարեցի  
Եվ կյանքում մի օր  
Ուզեցի լինել  
Երջանիկ այնպես,  
Ինչպես ծաղիկն այս,  
Որ ցանեցի ես,  
Սակայն ով զարմանք,  
Իր բույր ու գույնով  
Արեգնածին էր:

Եվ հիշողությամբ  
Ցանկացա փնտրել  
Ու գտնել նրան,  
Ով գույն ու լույսի  
Նախապատկերն էր:

Երգիս մեղեդին  
Թռչունին թովեց,  
Բայց, երբ ուզեցի  
Թևեր փոխառնել՝  
Ուժս չպատեց,  
Նա, նա թռչունն էլ,  
Որ փետրավոր էր՝  
Արեգնածին էր:

Ես մարդ, մարդկային  
Ու մարդկայնորեն,  
Ավաղ, հողեղեն...